ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1473 17.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՊ № 4-191
21 10 2014 թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի ՁՊՎ-ում ուսումնասիրություններ կատարելու ընթացքում, արձանագրել էր որ սույն թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածում ՁՊՎ ընդունված անձանցից ոչ ոքի մոտ մարմնական վնասվածքներ չէր արձանագրվել, որը ըստ պահանջի պետք է գրանցված լիներ <<Ձերբակալված անձանց բուժօգնության և բուժզննության>> գրանցամատյանում:

Դիտորդական խումբը կատարելով հետագա ուսումնասիրություն, հարցում էր ուղարկել ՀՀ ԱՆ ՔԿՀ վարչություն տեղեկություններ ստանալու համար՝02.09.2014թ-ին թիվ 2621/152 գրությամբ:

Խումբը ՀՀ ԱՆ ՔԿՀ վարչությունից խնդրել էր, որպեսզի տեղեկություն տրամադրվեր, թե հունվարի 1-ից մինչև հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի ՁՊՎ-ից քանի կալանավոր է ընդունվել ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ և քանիսի մոտ էր արձանագրվել մարմնական վնասվածքներ:

Ի պատասխան Դիտորդական խմբի հարցմանը՝ 05.09.2014թ-ին թիվ 40/4-2633 գրությամբ տրվել էր մեկնաբանություն, որ նշված ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ-ից ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ ընդունվել են 21 կալանավորված անձիք, որոնցից 6-ի մոտ արձանագրվել են մարմնական վնասվածքներ: /կից ներկայացնում ենք Դիտորդական խմբի գրությունը՝ իր մեկնաբանությամբ/

<< Ոստիկանության Քարտուղարություն
Մուտք թիվ 8160
21 10 2014 թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Հաջորդիվ՝ նույն բովանդակությամբ հարցում 24.09.2014թ-ին թիվ 2621/1461 գրությամբ Խումբը ներկայացրել էր ՀՀ ոստիկանությանը, որին ի պատասխան 10.10.2014թ-ին թիվ 2/2-1-2528 գրությամբ տրվել էր մեկնաբանություն, որ սույն թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՃՊՎ-ից ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ տեղափոխվել են 18 ձերբակալված անձիք / 21-ի փոխարեն/, որոնցից 9-ի մոտ մարմնի արտաքին զննության ժամանակ արձանագրվել մարմնական վնասվածքներ / 6-ի փոխարեն/:

Դիտորդական խումբը չբավարարվելով ձեռք բերած ինֆորմացիայով, կրկին՝ 11.09.2014թ-ին թիվ 2621/1458 գրությամբ ՀՀ ԱՆ ՔԿՀ վարչությանը խնդրել էր, որպեսզի տրամադրվեր նշված 6 անձանց անուն ազգանունները և արձանագրված մարմնական վնասվածքները /կից ներկայացնում ենք Դիտորդական խմբի գրությունը՝ իր մեկնաբանությամբ/:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Դիտորդական խմբի կողմից կատարված մոնիթորինգի արդյունքները, երկու գերատեսչությունների կողմից տրված մեկնաբանությունները արձանագրվել է, որ

1. Տվյալ ՃՊՎ-ում մարմնական վնասվածքներով ընդունված անձանց մարմնական վնասվածքները թաքցվում են և չեն գրանցվում
2. Չեն համապատասխանում ձերբակալված, հաջորդիվ կալանավորված և ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ տեղափոխված անձանց քանակը
3. Չեն համապատասխանում մարմնական վնասվածքներով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՃՊՎ ընդունված և հաջրոդիվ ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ տեղափոխված անձանց մարմնական վնասվածքների քանակը
4. Չեն համապատասխանում նույն մարդկանց մոտ տարբեր գերատեսչություններում արձանագրված մարմնական վնասվածքների տեսակները:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-2872 «07» 11 2014թ.

Ձեր 17.10.2014թ. թիվ 2621/1473 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ուղարկված գրությունն ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Լոռու մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

Դիտորդների խմբի հաշվետվության առաջին պարբերության վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից 29.10.2014թ. թիվ 2/2-1-2747 գրությամբ տրվել է սպառիչ պատասխան:

Երրորդ պարբերության վերաբերյալ հայտնվում է, որ դիտորդների խումբն իր 24.09.2014թ. թիվ 2621/1461 գրությամբ խնդրել էր տրամադրել տեղեկատվություն հետևյալի վերաբերյալ. <<2014թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 28-ը ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ-ից **քանի ձերբակալված, հաջորդիվ կալանավորված անձ** է տեղափոխվել ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ՝ ըստ անուն ազգանունների և նրանցից ում մոտ է հայտնաբերվել մարմնական վնասվածքներ>>:

Ի պատասխան վերոգրյալ գրությանը ՀՀ ոստիկանության շտաբի կողմից 10.10.2014թ. թիվ 2/2-1-2528 գրությամբ տրամադրվել է տեղեկատվություն, որ նշված ժամանակահատվածում ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ-ից ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ են տեղափոխվել 18 ձերբակալված անձինք: Եթե դիտորդների խումբն իր գրության մեջ նշեր <<**ձերբակալված և կալանավորված անձինք**>>, ապա կտրամադրվեր նաև տեղեկատվություն վերը նշված ժամանակահատվածում ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ մուտք գործած թվով 3 դատապարտյալների վերաբերյալ և հետևաբար կնշվեր, որ թվով 21 անձ է տեղափոխվել ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ:

Ստորև ներկայացվում է թվով 3 դատապարտյալների տվյալները, որոնց մոտ ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ ընդունվելիս մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել.

1. Սուրիկ Վահագնի Սերոբյան,
2. Արտակ Սարգսի Ավագյան,
3. Արմեն Թելմանի Մուրադյան:

Չորրորդ պարբերության վերաբերյալ հայտնվում է, որ ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ ընդունվելիս թվով 9-ը անձանց մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ և <<Ձերբակալված և կալանավորված անձանց>> պահելու մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ վարույթն իրականացնող մարմնին տրվել են իրազեկումներ: ՀՀ ոստիկանությունը ՁՊՎ ընդունված անձանց մոտ հայտնաբերված մարմնական վնասվածքները թաքցնելու որևէ միտում չունի, հակառակ դեպքում մարմնական վնասվածքներով ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ ընդունված անձանց քանակը ավելին չէր լինի, քան ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ-ում ընդունվածներինը: ՀՀ ոստիկանությունը կոչ է անում դիտորդների խմբին, որ ՀՀ ոստիկանությանն անհիմն մեղադրանքներ ներակայացնելուց առաջ մանրակրկիտ ուսումնասիրել առկա հանգամանքները, գրություններում ներկայացված հարցադրումները ճիշտ շարադրել, որից հետո նոր տալ գնահատականներ:

Ոստիկանության Տարոնի բաժնի ծառայողների կողմից ՀՀ կառավարության 05.07.2008թ. թիվ 574-Ն որոշմանբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 2-րդ գլխի 13-րդ կետի պահանջները խախտելու փաստով կատարվել է ծառայողական քննություն, որի մասին 29.10.2014թ. թիվ 2/2-1-2747 գրությամբ Ձեզ հայտնվել է:

ՀՀ ոստիկանության շտաբ